

08.10.2010թ.

Հայաստանի Հանրապետության
Սփյուռքի նախարարությանը

Ներքոստորագրողս՝ իրանահայ շրջանավարտ Արփի Զաքարյանս, սույն գրությամբ ցանկանում եմ խորին շնորհակալություններս հայտնել Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարությանը, սեպտեմբերի 20-22 սփյուռքահայ շրջանավարտների կազմակերպած համահավաքի համար, որը շատ ջերմ ու հարազատ ընդունելություն էր նախարարության բոլոր անձնակազմի կողմից: Այդ երեք օրում այնպիսի զգացմունքներ են արթնացել իմ մեջ, որ հարգելի նախարար Հրանուշ Հակոբյանի «Արի տուն» ծրագիրը նմանում է մի օր, որն իր անմնացորդ սիրով, աշխարհում ցրած իր միլիոնավոր զավակներին կանչում է տուն և ջանք չի խնայում ամենադյուրին պայմանները ստեղծելու իր երեխաների համար, մայր հայրենիքում ապաստան գտնելու, իրենց հանգիստ ու հարազատ զգալու համար:

Ուղջու՛յն Ձեզ, տիկին Հրանուշ Հակոբյան

Շնորհակալություն այսքան ջերմ վերաբերմունքի և տրամադրության համար:

Չանկանում եմ այստեղ մի երկու հարցի շուրջ արտահայտվել, որոնք ինձ մտահոգել են, և հարգելի նախարարությունից խնդրում եմ կարելի չափ աջակցել այդ հարցերի շուրջ:

1. Օվիոյի 10 տարուց կեցության անձնագրի վճարը և հանձնումը.

Անձամբ օվիոյից տեղեկացա, թե 10 տարվա կեցության անձնագիրը ստանալու, ժամկետը երկարացնելու համար պահանջվում է 150.000 դրամ, և հանձնումը կտևի 45 օր և նախքան իմ Հայաստան գալը, Իրանում գտնվող Հայաստանի դեսպանատնից տեղեկացա, անձնագրի հանձնման ավելի երկար՝ 6-ամսյա ժամկետը, որոնք ոչ վերջինը, ոչ էլ առաջինը, հարմար չէ գրոսաշրջիկի համար, որը միայն 21-օրյա հանգստի համար է վիզա ստացել, և պետք է վերադառնա իր երկիրը: Իսկ վճարի հարցով, միգրացե այն քաժանենք 10 տարվա և շատ չնչին գումար ստանանք, տարեկան հաշվարկումով, բայց երբ միանգամից և մեկտեղում է 150.000 դրամ պահանջվում, այն ծանր է գալիս:

Եթե հնարավոր է վերանայել վերոհիշյալ օրենքները, և ավելի դյուրին պայմաններ ստեղծել սփյուռքահայերի համար, ինչպես երկրադաքացիության օրենքն է՝ 1000 դրամով ձևակերպվում:

2. «Արմենիա» հեռուստաընկերությունից ահանջում եմ անձնական արխիվս.

«Միլուետ» /նախքան մոնտաժը՝ «Անուրջներ»/ երկարամետրաժ կինոնկար, 1999թ., ռեժ.՝

Արմեն Գովլաթյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Մտերմիվ 2617-10
«12» 10 2010 թ.

Տարիներ է, ինչ իմ ծանոթների միջոցով փնտրում եմ խաղարկած ֆիլմի անձնական արխիվս, լրացնելու հարցով, և այժմ, երբ ինքս անձամբ ներկա եմ Հայաստանում, դարձյալ նույն կրկնվող նախադասության դեմ եմ հանդիպում, թե՛ «Այդ բոլոր “Հայ ֆիլմի” ֆիլմերը «Արմենիա» հեռուստաընկերությունում են, և դեռ չի թվայնացվել...» : Այսպիսով ես մի փաստի առջև եմ կանգնած, որ ոչ մի կեչպ չեմ կարողանում փոփոխել:

Հարգելի նախարարությունից խնդրում եմ հնարավորության սահմաններում աջակցել ինձ, ստանալ այն, քանի որ դա իմ կարիերայի մի մասնիկն է, որը շատ անհրաժեշտ է որևէ տեղ իմ կարողությունները ցուցադրելու և քննարկելու համար:

Կանխահայտ շնորհակալություններով՝

Հարգանքով՝

Արփի Չարպարյան



arpizakarian@yahoo.com

(0098) 912 620 39 37 (Ֆեկս)